ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հարթ տանիքի վերանորոգման և հեռուստաաշտարակների ներկման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

/ԳԲՔԱ-ԼՕ-2021/60 Որոշման հիման վրա/

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 05.08.2021թ. ժամը 12.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահող՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատանքների Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Ռ. Աֆանդյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատանքների՝ ԳՊ/ԳԱ/ Գ. Սահակյանը
Դ. Հակոբյանը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատանքների՝ ԳՊ/ԲԱ/՝ Ի. Պողոսյանը

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

Բացակայում է Լ. Դալուզյանը

1. Ընդունել ի գիտություն.

Հանձնաժողովը հիմք է ընդունում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/60 Որոշումը, նաև այն հանգամանքը, որ Որոշումը իր ամբողջության մեջ իրավապարտադիր է:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձի (այսուհետ՝ ԳԲՔԱ) գործունեության կարգը հաստատելու մասին թիվ 600-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման)՝ բողոքը բաղկացած է հետևյալ չորս մասերից.

1) ներածական
2) նկարագրական
3) պատճառաբանական
4) եզրափակիչ

Բազմակողմանի և օբյեկտիվ ուսումնասիրելով գործի ՀՀՌՑ ՓԲ ընկերության և որպես 3-րդ անձ ներգրավված Տերմոպրոտեկտ ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստական հանգամանքները՝ ԳԲՔԱ-ն հիմք ընդունելով Հրամանի նկարագրական և պատճառաբանական մասերը (տե՛ս 24-25 էջ) նշել է՝ *«Անդրադառնալով բողոքի՝ «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելուն պարտավորեցնելու մասին ներկայացված պահանջին, Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն անհիմն է, այն փաստացի հաշվառմամբ, որ Ընկերությունը ընտրված մասնակից կարող է ճանաչվել Օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով սահմանված պահանջների պատշաճ կատարմամբ. Մասնավորապես՝ Հանձնաժողովի կողմից դեռ պետք է կիրառվի Կարգի 67-րդ և Հրավերի 8.21 կետի դրույթները, որից հետո իրականացվի՝ «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերի ամբողջական ու լիարժեք ուսումնասիրություն՝ գնահատում, հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, որն Օրենքի 26-րդ հոդվածի հիման վրա իրականացնում է գնահատող հանձնաժողովը: Այդ գնահատման արդյունքում է հնարավոր փաստել բողոքաբերի՝ որպես հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցի հանգամանքը, որից հետո նոր միայն Հանձնաժողովն իրավասու է՝ «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ-ն հայտարարել ընտրված մասնակից:»*

2. <u>Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց</u>

2.1 ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2021թ. գնահատման նիստի թիվ 3 արձանագրության 3.1 և 3.2 ենթակետերը, ինչպես նաև դրանցից բխող 5-րդ և 6-րդ կետերը համարել անվավեր և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ վերագնահատել «Վոլոդյա Բաղդասարյան» ԱՁ-ի (այսուհետ՝ ԱՁ) կողմից շտկման փուլում ներկայացված փաստաթղթերը

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

<u>3. Հանձնաժողովը արձանագրեց.</u>

3.1 Հրավերով սահմանվել է, որ աշխատանքներ իրականացնողը պետք է ունենա բարձրության վրա վտանգավոր աշխատանքներ կատարելու ալպինիստական տեխնոլոգիաներով թույլտվությունից բացի, նաև առաջին բուժ. օգնության համապատասխան վկայական:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 41-րդ կետով՝ ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08 ծածկագրով գնահատող հանձնաժողովի 16.06.2021թ. կայացած թիվ 2 գնահատման նիստի արձանագրության 5.1 կետով հնարավորություն է տրվել շտկել անհամապատասխանությունը, որից ԱՁ-ն օգտվել է մասնակի՝ մասնավորապես. ԱՁ-ի կողմից շտկման փուլում չի ներկայացվել Կամո Մատինյանի առաջին բուժ. օգնության փաստաթուղթը: Տվյալ դեպքում անհամապատասխանությունը երկրորդ անգամ շտկման ենթակա չէ:

<u>4. Հանձնաժողովը որոշեց.</u>

4.1 <u>Թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետը և 3-րդ կետը խմբագրել հետևյալ կերպ.</u>

2.1 Վոլոդյա Բաղդասարյան ԱՁ, Նարեկ Կարապետյան ԱՁ, Տերմոպրոտեկտ ՍՊ և Պրոթերմ ՍՊ ընկերությունների կողմից, մինչև կասեցման ժամկետի ավարտը արձանագրված անհամապատասխանությունների մասով ներկայացվել է հետևյալը.

N	Մասնակցի անվանումը	**անհամապատասխանություններ, չներկայացված փաստաթղթեր**	**ներկայացված փաստաթղթեր /շտկման փուլ/**
1	Նարեկ Կարապետյան ԱՁ	1. Հավելված 1-ում նշված չէ հարկ վճարողի հաշվառման համարը /ՀՎՀՀ/: 2. Աշխատանքային ռեսուրսները հիմնավորող փաստաթղթերը /կրթություն, աշխատանքային փորձ/	1. Հավելված 1-ով ներկայացվել է հարկ վճարողի հաշվառման համարը /ՀՎՀՀ/: 2. Փաստաթղթեր չեն ներկայացվել
2	Վոլոդյա Բաղդասարյան ԱՁ	1. Գնային առաջարկին կից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը՝ հաշվի առնելով կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: 2. Աշխատանքային ռեսուրսները հիմնավորող փաստաթղթերը /կրթություն, աշխատանքային փորձ/	1. Փաստաթուղթը ներկայացվել է համապատասխան ձևաչափով 2. Պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են, սակայն առկա են անճշտություններ՝ մասնավորապես*
3	Տերմոպրոտեկտ ՍՊԸ	1. Աշխատանքային ռեսուրսները հիմնավորող փաստաթղթերը /կրթություն, աշխատանքային փորձ/	Ներկայացվել են համապատասխան փաստաթղթեր
4	Պրոթերմ ՍՊԸ	1. Հավելված 1-ում նշված չէ գործունեության հասցեն 2. Աշխատանքային ռեսուրսները հիմնավորող փաստաթղթերը /կրթություն, աշխատանքային փորձ/	Ներկայացվել են համապատասխան փաստաթղթեր

* Մատինյան Կամո՝ տրվել է միայն «Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով» վկայական, առանց «առաջին բուժ. օգնության» նշման /կցվում է/ :

3. Հանձնաժողովը որոշեց

3.1 Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով՝ Վոլոդյա Բաղդասարյան ԱՁ և Նարեկ Կարապետյան ԱՁ հայտերը գնահատել անբավարար և մերժել

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

3.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ գների նվազեցման նպատակով նիստը կասեցնել երկու աշխատանքային օրով մինչև 09.08.2021թ. ժամը 16.00-ը և 2-րդ չափաբաժնով Տերմոպրոտեկտ և Պրոթերմ ՍՊ ընկերություններին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

/Բանակցությունները վարվելու են էլեկտրոնային եղանակով, Ընթացակարգի հրավերով նշված էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով /hhrc.gnumner@tna.am, hhrc.gnum@tna.am/ և յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվելու է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը; բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած վերջնական գների, կորոշվի ու կհայտարարվի ընտրված և հաջորդական տեղերը զբաղեցրած մասնակիցները/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

5. Հաջորդ նիստը տեղի կունենա 09.08.2021թ. ժամը 16:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ռ. Աֆանդյան

_____ Գ. Սահակյան

անդամներ՝ _____ Դ. Հակոբյան

_____ Ի. Պողոսյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան

ООО "ОПАСНАЯ ВЫСОТА"
"DANGEROUS ALTITUDE" LTD

ՎՏԱՆԳԱՎՈՐ
ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ No 180



Համո Սատինյան

ապրիլ 2020

մասնակցել է

«Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով» դասընթացներին

ուժի մեջ է մինչև ապրիլ 2022թ..

"Վտանգավոր Բարձրություն"
ՍՊԸ տնօրեն Ս. ԴԱՆԻԵԼՅԱՆ